Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Գործուղված անձիք**

| | |
|---|---|
| Մարինե Սարիբեկյան | շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Այցելություն Հյուսիսային Մակեդոնիա, ք. Սկոպյե՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-3-ը

3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

   Միացյալ ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովը

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանական կատարողականի վերանայման թիմի կողմից կազմակերպված աշխատաժողովին: Հանդիպման նպատակն էր բարձրացնել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանական կատարողականի վերանայման (EPR) ծրագրին մասնակցող 19 երկրների պետական պաշտոնյաների և փորձագետների կարողությունները՝ ներառյալ Կենտրոնական, Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները: Մասնակիցները հնարավորություն ունեցան քննարկելու ընտրված թեմաների համատեքստում համապատասխան մեխանիզմների, գործիքների և լավագույն փորձի բացահայտումն ու կիրառումը:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- ✓ Ընդհանուր խնդիրները, մարտահրավերները և առաջարկությունները, ինչպես նշված են բնապահպանական կատարողականի ակնարկում (EPRs), ներառյալ համապատասխան Կայուն զարգացման նպատակների հասցեագրումը,
- ✓ Կլիմայի փոփոխության քաղաքականության մշակման հետ կապված բնապահպանական կատարողականի վերանայման թիմի կողմից ներկայացված առաջարկությունների իրականացման վերաբերյալ փորձի փոխանակում: Երկրների ներկայացուցիչների ներկայացումներ,
- ✓ Կլիմայի փոփոխության քաղաքականության մշակման առաջնահերթությունները և մեթոդաբանությունը,
- ✓ կլիմայի փոփոխություն և Կայուն զարգացման նպատակների խաչաձևում. քաղաքականության մշակման հնարավորությունները և մարտահրավերները,
- ✓ Կլիմայական բյուջեի հատկորոշում և կանաչ տնտեսություն,
- ✓ Գենդեր և կլիմայի փոփոխություն,
- ✓ Ինտերակտիվ նիստ՝ EPR առաջարկությունների իրականացման համար հաջորդ քայլերը բացահայտելու համար. հետագա հնարավոր տարածաշրջանային փոխանակումների վերաբերյալ կարծիքների փոխանակում:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի, Ալբանիայի, Վրաստանի, Բոսնիա և Հերցոգովինայի, Ղազախստանի, Ղրղստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի և ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանական կատարողականի վերանայման (EPR) թիմի ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հրավիրված էին 30 ներկայացուցիչ:

Հանդիպման երկու օրերի ընթացքում երկրների ներկայացուցիչները հանդես եկան ներկյացումներով: Հանդիպման առաջին օրը ես ներկայացրեցի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանական կատարողականի վերանայման (EPR) թիմի կողմից ներկայացված կլիմայի փոփոխությանը վերաբերող առաջարկությունների կատարման ընթացքը:

Հանդիպման երկրորդ օրը Ինտերակտիվ նիստ՝ EPR առաջարկությունների իրականացման համար հաջորդ քայլերը բացահայտելու համար. հետագա հնարավոր տարածաշրջանային փոխանակումների վերաբերյալ կարծիքների փոխանակում:

**7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նախապատրաստվել է աշխատանքային փաստաթուղթ, որը պարունակում է ընտրված EPR առաջարկություններ՝ կապված մասնակից երկրների կլիմայի փոփոխության քաղաքականության հետ՝ առաջարկությունների իրականացման առաջընթացը գնահատելու և մասնակից երկրներին աջակցելու նպատակով:
Պայմանավորվեցին քննարկումների ամփոփագիրը և մասնակիցների ցանկը ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության կողմից վերջնական տեսքի բերելուց հետո՝ շրջանառվի սեմինարի մասնակիցներին միջև:

## 8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ձեռք բերվեց նոր գիտելիքներ և փորձ՝ կապված կլիմայի փոփոխության քաղաքականության և առաջարկությունների իրականացման առաջընթացը գնահատելու հետ, ընտրված թեմաների համատեքստում համատեքստում համապատասխան մեխանիզմների, գործիքների և լավագույն փորձի բացահայտումն ու կիրառումը:
Այս անգամ արդեն երկրները ներկայացրեցին առաջարկություններ՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանական կատարողականի վերանայման (EPR) թիմին առաջիկա զեկույցում ներառելու նպատակով:

*Գործուղվող՝* *Մարինե Սարիբեկյան*

*04.12.2023 թ.*